

ԱԷՏԱՐԷՐ



«ԹՈՂ ՏՈՒՆԻ ԲԱՆԵՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՈՒՑ ԳԱՆ» : ԴՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Դ .

ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅՈՒՆ . ՄԱՅԻՍ 1 . 1875 .

ԹԻԻ 5



Տղայոց Աւետարների համար

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ահա ծառերը կը ծաղկին, թռչունք կը սկսին իրենց բոյները շինել . գարուն եկաւ : Կը տեսնէք որ հիմա երկիրն իր թմրութենէն կը սթափի : Բնութիւնը խոր արտութենէ մը կ'ելլէ, և կը փայլի քաղցր ժպիտներով : Տես, առաւօտեան մեզմէ լռիկ ժամերուն մէջ արեգակն ինչ հիանալի

կերպով իւր գլուխը լեռներուն վրայէն կը բարձրացնէ, և իր ոսկեճաճանշնչայններովը կը լուստորէ բոլոր արարածները : Ինչ քաղցր է ստիակին և տատարակին դայլայլիկը և առհասարակ թռչնոց անոյշ երգը որ կու գայ անառններէն . կարծես թէ այս փոքրիկ արարածներն ալ բնութեան հետ կը զուարթանան և կը փառաբանեն Արարիչը : Ինչ անոյշ կու գայ ծաղկանց վրայէն առաւօտ-

եան հեշտ զեփուռը : Ղտակներ և դեռեր կարկաջելով կը վազեն : Կը տեսնէք հիմա կովերը որ գոչելով մառններէն կ'ելլեն, և դառնք նոյնպէս բառայնով մարգագետնին վրայ կ'արածուին : Մեղուն բզզալով ծաղկանց հիւթերը կը ժողվէ, և միջիւնն իր ձմերային պաշարը կը հաւաքէ : Տես նաև ինչպէս երկրագործը կու գայ արօրով և բրջով երկիրը հերկելու : Ծառերը կը բողբոջին և ծաղկունք կը փթթին հեղհեղէն որ մեզի բերրի ամառ մը ընծայեն : Ո՛հ, ինչ զուարթութիւն կը տիրէ բոլոր մարդոց ու տղայոց մտաց և սրտերուն :

Բայց, սիրելի տղայք, այս սխրալի տեսարանը կ'արթնցնէ՞ ձեր միտքերը . կը խորհիք թէ դուք հիմա այս գարնան հետ ձեր կենցաղ քորուն ալ կը վայելէք : Ձեր այս կենաց գարնան մէջ արդարութեան Արեգակն իր հոգեւոր ճառագայթիւք կը փայլի ձեր սրտերուն վրայ . թռչնոց երգերուն նման՝ հոգեւոր խորհուրդներու, Քրիստոնէական զգացմանց և եղբայրական սիրոյ արձագանգներ ձեր սրտերէն դուրս կ'ելլեն . խոնարհութեան, հեղութեան, պարկեշտութեան և հնազանդութեան անուշահոտ ծաղիկունք կը բացուին ձեր սրտերուն մէջ . սիրոյ դեմքերը կը վազեն ձեր սրտերուն մէջէն . Քրիստոնէական կրթութիւն և բարոյական դաստիարակութիւն կը ճարակին հոն . դուք ալ ձեր կենաց գարնան մէջ կը գործէք ապագային համար, ինչպէս որ մեղուն, միջիւնը և երկրագործը կը գործեն ձմեռուան համար . կը բողբոջիք և կը ծաղկիք ապագային մէջ բարի պտուղներ հասցնելու : Ո՛հ, երանի թէ ամէնքդ ալ ձեր կենաց գարունը զարդարէք : Աստուած ձեզի իր

Հոգին ապ, որ անոր օգնականութեամբը ձեր գարնան մէջ արթնութեամբ գործէք, և ձեռն իւրաքանչիւր ոք ապագային համար պատրաստուի պտղատու ծառ ըլլալու մարդկային ընկերութեան մէջ :

ԳՍՅՈՍ Կ. ՔԵՄԱԼԵԱՆ



Գեորգի Աւստրալիական ԲՈՒՍՏՈՂԵԱՆ ԱՆՊՈՒՆՆԵՐՈՒՆ ԱՆԳԱՄ ԿՈՂՈՐԹԻ

1. «Մայր, մայր» գոչեց որ մը Գէորգ էր մայրը կանչելով, «Եհու, տես, դարացւոյն շունը մեր կատուն բռնելու կը ջանայ: Ինչ զուարճալի տեսարան է: Ես կանչեցի շունը ներս և կատուն քովդ գրկեցի»:

2. Գէորգ մօրը ձեռքէն բռնելով պատուհանին առջև տարաւ, և մայրը պատուհանէն պարտէզը նայելով տեսաւ որ դարացւոյն մեծ շունը կը հաչէր կատուն գէմ, որ ծառի մը վրայ կը կենար կռնակը կամարի պէս ծռած, աչուրները կանանչ և փայլուն, և բոլոր մազերը փրփրանքով տղանիք փուշերուն պէս: Կատուն արդարև ~~հապտեմ~~ բան մը եղած էր, բայց Գէորգայ մայրը չինդաց, այլ ցաւեցաւ որ Գէորգ կատուն թշուառ ընելով այնպէս կը զուարճանար: Փանդի յայտնի էր որ խեղճ կատուն դողի մէջ էր թէ գուցէ շունէն պատառ պատառ ըլլալ:

3. Գէորգայ մայրը պատուհանը բացաւ և ջանաց շունը դուրս վաճառել,

բայց այն մտիկ չըսաւ, ուստի մայրը զաւազան մը առնելով դուրս ելաւ, և հօշ, հօշ կը պոտար: Ետեւը շատ կատաղի էր, և սկսաւ մրմնալ Գէորգայ մօրը գէմ, երբ տեսաւ որ անիկա գաւազանով վրան կու գար: Վերջապէս Գէորգայ մայրը (վախցաւ) շունին վրայ երթալով նստաւ և կատուն բոլոր օրը (մնաց ծառին վրայ) շունը շարունակ կը հաչէր և ծառէն վեր կը յատկէր, մինչև որ իրիկուան ~~էր~~ մարդիկ եկան և շունը վաճառեցին:

4. Այն օրը Գէորգ շատ անցաւ իր բրածին վրայ, և մայրն ըսաւ անոր, «Գէորգ, կարծեմ չես ուզեր որ Աստուած քեզի ողորմի»: Ինչո՞ւ համար մայր» պատասխանեց Գէորգ, «Վաղեմ անտարակոյս»: Բայց երբ մայրն ըսաւ անոր թէ Աստուած ողորմածին հետ ողորմած կ'ըլլայ, ինչպէս Գառիթ ըսած է, Գէորգ շատ տրամեղաւ և լացաւ, քանզի առաջ ամենեկին խորհած չէր թէ սրչափ գէշ էր ինչ որ ըրաւ կատուն:

ԱՆՁՐԵՒՈՏ ՕՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԽԱՂ

Անձրեւոտ օրերու համար շատ զուարճալի խաղ է հարցման խաղը: Խաղալ ուղղակի կը բաժնուին երկու հաւասար խումբ, և մէկ խումբը Ստեփանը, միւսն ալ Պօղոսը կ'ընտրէ որ նիւթ մը որոշեն: Այս երկուքը սենեակէն դուրս կ'ելլեն, և միաբան հաւանութեամբ նիւթ մը կ'որոշեն զոր երկու խումբն ալ գտնելու պիտի ջանայ: Զօրօրինակ, Ստեփանին կարմիր գլխարկին (Քե) վրայ բիծ մը կայ, Պօղոս և Ստեփան կ'որոշեն այն բիծն առնել իրբև նիւթ, զոր երկու խումբն ալ պիտի գտնեն գուշակելով: Այսպէս նիւթ մը ընտրելէն ետքը նորէն ներս կը մտնեն, և Ստեփան Պօղոսի խումբին կ'երթայ, Պօղոս ալ Ստեփանի խումբին, և անոնցմէ կը պահանջեն ըսել թէ ինչ է իրենց ընտրած նիւթը: Իւրաքանչիւր խումբ կը նայի որ միւսէն առաջ գտնէ այն նիւթը, խումբին կողմանէ իրենց եղած հարցումներուն Ստեփան և Պօղոս Այս կամ Ոչ միայն կը պատասխանեն բայց տատասխանները շտապ ըլլալու են:

Ձեզի կը թուի թէ անկարելի է գտնել ինչ որ այն երկու տղայք սենեակէն դուրս առանձին կ'որոշեն: Բայց շատ դիւրաւ կրնայ գտնուիլ անոնց որոշածը, ինչպէս հիմա պիտի տեսնէք: Դիցուք թէ վերոյիշեալ երկու տղոց որոշած բանը Ստեփանին կարմիր գլխարկին վրայի բիծն է, միւս տղայք որ այս բանը չեն գիտեր կրնան հարցունել, այսինքն խումբէն մէկը Ստեփանին կամ Պօղոսին կը հարցնէ, «Ձեր որոշած բանը կենդանի է»: Ստեփան կամ Պօղոս, որուն այս հարցումը կ'ըլլայ, կը պատասխանէ, «Ոչ»: «Փայտ է»: Կը հարցընեն միւսները, «Տղան կը պատասխանէ», «Ոչ»: «Քաթ է»: «Ոչ»: «Երկաթ է»: «Ոչ»: Այս սենեակին մէջն է»: «Այո»: «Անձի մը վրան է»: «Այո»: «Պետրոսին վրան է»: «Ոչ»: «Յակոբին վրան է»: «Ոչ»: «Ստեփանին վրան է»: «Այո»: «Անոր գրպանին մէջն է»: «Ոչ»: «Գլխուն վրան է»: «Այո»: «Անոր կարմիր գլխարկն է»: «Ոչ»: «Անոր մնողն է»: «Ոչ»: «Անոր կարմիր գլխարկին վրան է»: «Այո»: «Անոր կարմիր գլխարկին ծոպն (պէպէ) է»: «Ոչ»: «Անոր կարմիր գլխարկին վրայի բիծն է»: «Այո»: Մինչ մէկ խումբը Պօղոսին կ'ընէ այս հարցումները, միւս խումբը Ստեփանին ուրիշ հարցումներ կ'ընէ նոյն նիւթին վրայ: Բայց երբ Պօղոսին հարցում ընող խումբն առաջ կը գտնէ առաջարկուած նիւթը, Պօղոս և Ստեփան միանգամայն կ'անցնին այն խումբին, և ապա երկու խումբը նորէն մէյմէկ հոգի կ'ընտրեն, և այս նոր ընտրուածները դարձեալ սենեակէն դուրս ելլելով ուրիշ նիւթ մը կ'որոշեն և ներս կու գան, և խաղը կը շարունակուի առաջին անգամուան պէս: Առաջարկուած նիւթը գտնող խումբը միշտ կը վաստիկ այն երկու տղան որ առաջարկուած ինն ըրին: Որ խումբը որ միւս խումբին բոլոր անձինքն այսպէս կը վաստիկ խաղը վաստիկած կ'ըլլայ:

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՄԱՆՅ ՊԱՏԱՍԻԱՆ ՀԱՐՑԱՌՈՒՔ

1. Կը տեսնէք որ աշխարհս փորձարար է, ուր մարդիկ անդադար կը փորձուին:
2. Կը տեսնէք որ մարդիկ միշտ աշխարհիս լուծը յօժարութեամբ կրելու հակամէտ են:
3. Կը տեսնէք որ մարդիկ այս հակամտութիւնը տղայութենէ ի վեր ունին:

4. Կը տեսնէ՞ք որ տղայք ընելու շատ բան ունին, որպէս զի անոնց ապագայ կեանքը շիտակ ըլլայ:

5. Կը տեսնէ՞ք որ իրենց մանկութեան տարիները չարաչար գործածող տղայք, հազը զղջացին, և իրենց վիճակը սղբացին, բայց ի վերջ:

6. Կը կարծէ՞ք թէ մարդս ի բնէ թշուառութեան համար ստեղծուած է:

ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ

1. Արդարև աշխարհս փորձաքար է ուր մարդս ամէն վայրկեան կը փորձուի, ինչպէս որ սակերչին ձեռքով սակին փորձաքարին զարնուելով կը զանազանուի պղինձէն: Մարդըս միշտ այս փորձաքարին զարնողը նախանամութիւնն է:

2. Մարդս կ'ուզէ ծառայել մանուսանդ զգալի բաներու, որ անոր համար կորուստ են:

3. Մարդ արդարև աշխարհիս լուծը կրելու հակամիտութեամբ աշխարհք կու գայ:

4. Տղայք մանկութեան ատեն ընելու շատ բան ունին, քանզի մանկութիւնն է մարդկային կենաց գարունը, որ ցանկելու և տնկելու եղանակն է:

5. Այս, աշխարհիս մէջ թշուառ մարդոց շատերն իրենց կենաց առաջին տարիներն անհոգութեամբ անցուցած են:

6. Բնաւ այնպէս կարծելու չենք, քանզի ամենակարող Տէրը մարդս լուսոյ որդի ըլլալու սահմանեց. բայց մարդիկ խառար լայն աւելի սիրեցին որ իրենց չարութիւնները չյայտնուին. սակայն ինչ որ մարդիկ խառարի մէջ կը գործեն՝ ճշմարտութեան լուսով պիտի յայտնուի երկնից և երկրի առջև: Յիշենք Տէրովը խօսքը թէ Չկայ բան մը որ ծածուկ պահուի:

Կը յուսամ որ դուք, Աւետարեքը կարգացող տղայք, ձեր մանկութեան ատենը կը ջանաք ընել այնպիսի գործեր, որ անոնց պատուը յետոյ վայելէք ձեր բոլոր կենացը մէջ:

Բարեկամ ձեր ՀԱՅԿԵԱՆ


ԱՆՁԵՌԱԳՈՐԾ ՏՈՒՆԵՐ

Աւետարեքը կարգացող տղոցմէ որչափներ կան որ մեղուանոց տեսած են: Գուք մեղուանոցը, և մեղրի մէջ մեղրի բլիճները տեսած էք, բայց խորհած էք երբէք թէ ինչ զարմանալի տնակներ են այն բլիճները: Անոնք զարմանալի են, վասն զի անոնց ձևն այնպէս է որ անոնք կը շինուին գործածուած մոմէն առանց փոքրիկ մաս մ'անդամ կորսուելու, և վասն զի անոնց գործ-

ծուածքը շատ կաարեալ է, թէպէտ այն փոքրիկ միջատները ոչ գործիք ունին որով շինեն, ոչ ալ օրինակ որուն հետեին: Թռչոյ մը բոյնը զարմանալի է, բայց անոր ձևը հաստատուն և որոշ կանոնի մը համաձայն չէ. բայց մեղուանոցի մը բլիճներուն ամէնքն ալ վեցանկուսի են, և միշտ վեցկուսի: Աշխարհիս սր կողմն երթաք, մեղուներն այս բլիճները միևնոյն ձև կը շինեն և իրարու ճիշդ նման, ինչպէս պատկերին մէջ կը տեսնէք: Առ թուղթ և մկրատ և ջանա կարել ջանի մը վեցկողմեան կտորներ այնպէս որ իրարու ճիշդ նման ըլլան, ինչպէս մեղուին շինած բլիճներն իրարու նման են, և քիչ մը պիտի հասկնաս այս փոքրիկ արհեստագործներուն ճարտարութիւնը:



ԹԱԳՈՒՅԻ



մեղու (արու մեղու), և, երբեմն, մինչև իբր 20,000 գործաւոր մեղու: Թագուհին բոլոր ձուերն ածող մայրն է, և միւս բոլոր մեղուներն անոր հետ յարգութեամբ կը վարուին: Արջմեղուները մեղուանոցին մէջ գանուսը բոլոր պզտիկ մեղուներուն հայրերն են և խայթոց չունին. և որով հետև ասոնք մեղր չեն շիներ, ամէն ամառ որոշ ժամանակ մը մեղուանոցէն դուրս կը վռնուին գործաւոր մեղուներէն, որոնք կը մեռնեն զանոնք, եթէ նորէն ներս գան: Գործաւոր մեղուները մանրիկեկ են քան զարուները, և ունին ինչ որ ոչ թա-



ԱՐՋ ՄԵՆՈՒ

գուհին և սլարու մեղուներն ունին, այսինքն քսակներ մեղրը քաղելու համար, նաև մոմ շինելու միջոցներ: Այս գործաւոր մեղուները կը շինեն բլիճները և զանոնք կը լեցնեն մեղրով, մեղուանոցը կը մաքրեն եթէ հարկ է, թագուհւոյն ծառայութիւն կ'ընեն, և կը նային որ ձուերն աղէկ հագացուին, և ձագերը բաւական կերակուր ունենան: Եթէ աղայ մը պատահութիւն ունենալով գիտէ զգուշութեամբ մեղուները երբ անոնք մեղր կը շինեն, բոլոր այս բաները և ուրիշ աւելի զարմանալի բաներ պիտի տեսնէ:



ԳՈՐԾԱՌՈՐ

Տղայոց Աւետարեքի համար.

ԼԻՑ ԴԱՀԵԿԱՆ ՄԸ

1. Տիկին մը իրիկուան դէմ պտտելու ելաւ, և մրգավաճառի մը խանութին մէջ գեղեցիկ նարինջներ տեսնելով, ուղեցանոնց մինչ դնել: Գրպանը խառնելով միայն մէկ գահեկան դտաւ, և, թէպէտ խանութէն ներս մտած էր, իսկոյն միտքը փոխեց: «Ոչ» ըսաւ ինք իրեն, «անգամին վրայ ամէն բարիք առատութեամբ վայելցի, հիմա այս նարինջն առնել աւելորդ կրնայ համարուիլ. աղաքս կը իրատեմ շատ անգամոր որկրամուլ չըլլան. նախ պարտիմ ես պահել այս իրատը: Այս գահեկանը կրնամ լաւագոյն բանի մը գործածել»:

2. Մինչ այս խորհուրդներով կ'երթար, նեղ փողոցի մը մտայեալ ուր գիտէր թէ աղքատ այրի կին մը կը բնակէր իր հինգ զաւակներովը: Տիկինն ուղեց այս աղքատ կնոջ այցելութիւն ընելու և անոր անկը մտնելով այն թշուառ կինը ախար մտածմանց մէջ ընկղմած գտաւ: Պատճառը հարցնելով իմոցաւ որ այրին իր վերջին գահեկանն այն առտուն հացի տուած էր, և ձեռագործը չկրնալով աւարտել, յոյս չունէր տեղէ մը ստակ ընդունել: «Նաև լուր առի որ» ըսաւ այրին, «նամակատան մէջ ինծի ուղղուած անվճար նամակ մը կայ որ կրնայ ինծի համար կարելու տեղեկութիւն մը պարունակել, բայց ստակ չունիմ նամակը բերել տալու»:

3. Տիկինն իր գրպանին մէջ մնացած

մէկ գահեկանը առաւ այրի կնոջ մեծ աղաւն, որ գնաց նամակը բերաւ: Նամակն այրոյն քրոջմէն էր որ կը գրէր անոր շուտով այն ինչ բազաքի երթալ, քանզի հայրը մահացաւ: հիւանդ ըլլալով կ'ուզէր զանի տեսնել և հետը հաշտուիլ: Այս կինն իր հօրը կամացը դէմամուսնանալով հայրը բարկացուցած էր, և Գտարիէն որ անտարբերութեամբ տեսած չէին: Կինը շուտով ճամբայ ելաւ և նոյն գիշերը հասաւ իր հօրը լոյս և հաշտուեցաւ անոր հետ: Երբունի հայրը շատ մխիթարուեցաւ անոր գալուն վրայ, և անոր ալ իր միւս աղջկանը հետ ժառանգութեան իրաւունք չնորհեցին ետքը, առտուն զէմ անգորր ու հաշտ սըրտով ննջեց:

Եւ Այս այրի կինը որ հիմա փառաւոր տան մը մէջ կը բնակի, և շատ բարիք կ'ընէ աղքատաց, բիւրեղեայ ամանի մը մէջ կը պահէ գահեկան մը ի յիշատակ այն գահեկանին որով կարող եղաւ առնուլ այն նամակը որ պատճառ եղաւ իր երջանկութեանը: ԵՆԻՆԻՍ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԲԱՆՏ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Երկու աղայ քաղաք գացին իրենց ապրուստը շահելու:

«Տեսնեմ», ըսաւ մին, «բախտն ինձի համար ինչ պիտի ընէ»

«Ես կ'ուզեմ տեսնել թէ աշխատութիւնն ինձի համար ինչ պիտի ընէ» ըսաւ ընկերը:

Ո՞րուն յուսալ աղէկ է, բախտին թէ աշխատութեան:

Տեսնե՛ք:

Բախտը միշտ կը սպասէ որ շահ գայ: Աշխատութիւնը միշտ շահաւոր բան մը կ'ընէ:

Բախտը միշտ անգործ կենալով կ'ըսէ, «Ո՛հ, եթէ անգամ մը հարուստ ըլլամ»

Աշխատութիւնն առաւօտուն կանուխ ելլելով կը սկսի գործել:

Բախտը կը հեծէ, աշխատութիւնը կը խնդայ:

Բախտը ծուլութեան մէջ կ'ընկղմի, աշխատութիւնը վեր կ'ելլէ գէպ անկախութիւն:


Տղայը, ձեզի համար սրն աւելի սիրելի է:

ՆԿԱՐՆԵՐՈՎ ԿԱՐԴԱԼ

Կարգալու այս կերպը Տղայոց Աւետարեթի մէջ արգէն երկու երեք անգամ տեսար: Այս անգամ ալ ան-

սէք թէ կրնաք արդեօք հետեւեալ համարները որոնց մէկ մտար նկարով է՝ կարգալ, առանց Աստուածաշունչին մէջ նայելու:

9. Գեղեցիկ կինը որ խոհեմութիւն չունի,



կը նմանի:

10

Իր դրացիին համար սուտ վկայութիւն ընողը՝



11

Իրենը չեղած դատին համար բարկացող անցաւորը՝


պէս է:



12

ինչպէս

պէս է:



13

ինչպէս

ու փայ-

տը կրակին, այնպէս է կռուասէր մարդը վէճ բուրնկցնելու:



, նոյնպէս

ալ սիրտը՝ մարդը մարդուն կը ցուցընէ:

բարեկամներուն մեծամեծ շնորհքներ կ'ընեն, մինչև կարողութիւն տալ անոնց ինչ որ կ'ուզեն անմիջապէս ունենալ: Տղայոց շատերն աղէկ դիտեն որ այնպիսի կարողութեան տէր ըլլալ անկարելի է, բայց և այնպէս կը փափաքին որ կարելի ըլլար: Այս փափաքն ունէր նաև Աննիկ, որ օր մը բաւ իր մօրը. «Մայր, կը բազմայի սգի բարեկամ մը ունենալ, որ ինձի այնպիսի կարողութիւն մը տար որ, երբ ծափ դարնէի, իսկոյն ծառաներ գային և ամէն սպասաւորութիւն ընէին ինձի»:

Մայրը ժպտելով նայեցաւ անոր ու ըսաւ. «Աննիկ, դուն ունիս արդէն այն ծառաները որոնց այսչափ կը փափաքիս»:

Աննիկ մօրը միտքը չհասկնալով, և կարծելով թէ սխալ պատասխան արւաւ, անոր հարցուց. «Ի՞նչ ըսել ուզեցիր, մայր»:

«Այն ծառաները որոնց դուն կը փափաքիս՝ ձեռքներուդ վրայ են. անոնք տան են թուով, և զանոնք կանչելու պէտք չունիս, քանզի ամենին հեռուն չեն երթար. բաւական է որ բան մը ստուգիւ կամենաս, անոնք պատրաստ են անմիջապէս կատարել, թէև ուզածդ դժուարին բան մը ըլլայ»:

Աննիկ հասկեցաւ թէ մայրը ծառայ ըսելով մատուրները կը հասկընար, որոնք արգարի կրնան ամէն ծառայութիւն ընել մեզի, ամենէն խիստ ծառայութիւններն անգամ, և այս բանին համար որտանց բաղձալ միայն բաւական է:

ՕՂԻԻ ՀԱՄԱՐ ԱՂԵԿ ՇԻՇ ՄԸ

Մարդ մը ատենօք կը զանգատէր թէ ճամբարգութեան ատեն ոգելից ըմպելի տանելու յարմար աման չկայ: Բարեկամ մը ըսաւ անոր. «Ճամբարգի մը համար մէկտեղ օղի տանելու ամենէն աղէկ ամանն, ըստ իմ կարծեաց, տակը ծակ չիչն է»:

Բոլոր արբեցողներու համար օղի ամենէն աղէկ չիչն այս է:

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն, Հյ. և Յն. գրող Տ. Տիգրան և Պ. Արշակունի) Կիսթայի ծախքով տարին 1/4 մէճ. 10 հատ, մէկ անձի ուղղուած, 2 1/2 մէճ.:

Անթիպայի միսիոնարաց ընկերութեան կողմէն Խմրագիր Ճ. Բ. ԿԲԻՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱԿՈՒՄ ԱՐՄԵՆԱՆ Չազմագըրար, Յակոբեան խան, Թիւ 12.